ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի կարիքների համար «Ծխախոտ», «Ալկոհոլային խմիչք» տեսակների ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 25.12.2018թ. N 422/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.02.2019թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ, Ժ.Կարապետյանը, Լ.Զաքարյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

Քանի որ, «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում տեղ գտած անհամապատասխանությունները և համակարգի միջոցով ներկայացրել է հրավերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը (կցվում է)՝ գնահատող հանձնաժողով շարունակեց հայտերի գնահատումը՝
-ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը /կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ա.Մանգասարյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
- առաջին տեղը զբաղեցրած «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
-Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մանգասարյան

Անդամներ՝ Ժ.Կարապետյան

Լ.Զաքարյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան